Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

Императрица
Екатерина II

891.99
И-97

1904

ՍՈՒՐԽԱԹԵԱՆ 12 MAR 2011

ՓԱՐՕՍԻ ՎՐԱ

(ՓՈԽԱԳՐՈՒԹԻՒՆ)

Արտատպված «Մշակ» լրագրից։

Ցլ. 99
Ս- 97

Ս.-ՊԵՏԵՐԲՈՒՐԳ
«ՇԿԻՆԵԱՆ ՏՊԱՐԱՆ»
1904

91.99
-97

Յ. Մ. ՍՈՒՐԽԱԹԵԱՆ

ՓԱՐՕՍԻ ՎՐԱ

(ՓՈԽԱԴՐՈՒԹԻՒՆ)

Արտատպված «Մշակ» լրագրից

Ս.-ՊԵՏԵՐԲՈՒՐԳ
«ՊՈՒՇԿԻՆԵԱՆ ՏՊԱՐԱՆ»
1904

56409

07 AUG 2013

Дозвол. Ценз. Тифлисъ, 25 Февраля 1904 г.

„Пушкинская Скоропечатня“, Лештуковъ, 4.

ՓԱՐՈՍԻ ՎՐԱ

(ՓՈԽԱԴՐՈՒԹԻՒՆ)

(Նուէր՝ Լ. Ս. ԹՈՒՄԱՆԵԱՆԻՆ)

Գողարիկ Ղրիմի հեռաւոր ափերում, ջրին միջից դուրս ցցված մոխրագոյն ժայռի կողքին, մինչև այժմ էլ կանգուն է մնում այն մեծաւոր Փարոսը, որի գլխովը մի շատ սրտաբեկ ողբերգութիւն է անցել։ Իւրաքանչիւր անգամ նաւով անցնելիս այդ Փարոսի մօտով, ես ակամայ յիշում եմ այդ անցքը մի տեսակ սարսուռով և վայրկենապէս մտաբերում այդ սոսկալի ողբերգութեան դժբաղդ հերոսներին...

Արմանն ու Պետրոսը ամբողջ վեց տարի պահպանութիւն էին անում այդ փարոսի վրա։ Նրանք իրանց պաշտօնը կատարում էին հերթով։ Սակայն շատ անգամ, երբ ծովի վրա տիրում էր ալեկոծութիւն, երբ խռովայոյզ ալիքները սկսում էին կատաղել և իրանց խրոխտ մռնչիւններով դուշակել մի որ և է տխուր հետևանք, այն ժամանակ սովորաբար Արմանն ու Պետրոսը միասին էին գիշերում Փարոսի

բարձր աշտարակի վրա և միասին լուսաւորում ու պահպանում Փարօսը։

Լինելով մարդկանցից հեռու, զերծ մարդաշատ կեանքի չարաբաստիկ շուկներից, որտեղից շատ անգամ ծնունդ են առնում կեանքի վնասակար երևոյթները և մարդկանց մէջ առաջացնում չարութիւն, վրէժխնդրութիւն, ուր մոլի չարագործութեան հնարագէտները, անփոյթ պարագիտների վոհմակները անարգաբար վխտում են կեանքի ալեծուփ ովկիանոսում,—այստեղ Արմանն ու Պետրոսը շատ սերտ կերպով կապվեցին իրար հետ և անչափ մաքուր եղբայրական սիրով սիրեցին իրար—հեռու վրէժխնդրութեան, նախանձի և դաւաճանութեան զգացումներից...

Նրանց մշտական խօսակցութեան առարկան Փարօսն էր, որին նրանք սիրում էին, որպէս մի շնչաւոր էակի, որովհետև չարադուշակ խաւարում նա վաղօրօք իմաց էր տալիս սպառնացող վտանգի մասին, նա նրանց զգուշացնում էր մահուան այն տագնապալից րոպէներում, երբ ամէն ինչ մատնվում էր սոսկալի կորստեան, և ապահով վիճակի մէջ էր դնում նրանց երերուն գոյութիւնը։

Բայց շատ անգամ խօսակցութեան նիւթը վերաբերում էր և աւելի ոգևորիչ առարկայի.

նրանցից իւրաքանչիւրը իր հայրենի գիւղում թողել էր իր ապագայ կեանքի ընկերին—իր սիրելի հարսնացուին, որոնց կարօտը այնքա՜ն մաշում էր այս՝ Սև ծովի հեռաւոր անկիւնը շպրտված՝ պանդուխտ երիտասարդներին։ Նրանք միշտ իրար ցոյց էին տալիս տանից ստացած նամակները և երդումներով հաւատացնելով դրանց ճշմարիտ լինելը՝ հեռանում էին դէպի Փարօսի աշտարակը։

Պետրոսը շատ անգամ իր ընկերին պատմում էր Ղրիմի լեգենդաներից, որոնցով այնքա՜ն հարուստ է այդ երկիրը. իսկ Արմանը, որ ընիկ Բոլղարացի հայերից էր և գիտէր հայերէն կարդալ, կարդում էր իր սիրած վէպերը, թարգմանում և ծանօթացնում էր Պետրոսին նրանց բովանդակութեան հետ։ Արմանը յանձն առնելով Փարօսի պահապանութեան պաշտօնը՝ հանդիպեց Պետրոսին, որը նոյնպէս պահապան էր, սակայն վերջինս խօսում էր միմիայն Ղրիմի աղաւաղված բարբառով։ Արմանը փոքր առ փոքր սովորեց այդ բարբառը և կարճ ժամանակամիջոցում սկսեց խօսել շատ սահուն, մինչդեռ Պետրոսը մի առանձին անհոգութեամբ յայտնեց, որ չէ ցանկանում դլուխ ցաւացնել՝ Արմանի «քրափառ» հայերէնը սովորելու համար։

Երբ նրանք յոդնում էին երկար ղրուցելուց, այն ժամանակ նստում էին Փարօսի տախտակամածի վրա և երկար դիտում մշտական հալածանքների ենթակայ ամպերի և կատաղի մրրկի դէմ մաքառող ծովի խռովայոյզ ալիքներին։ Երբ եղանակը խաղաղ էր լինում՝ —նրանք ձկներ էին որսում, իսկ երբ փոթորկալից—կարկատում էին իրանց շորերը և անվերջ մաքրում՝ խեղդողներին ազատելու համար ստացած մեդալները, որոնք առանց մաքրելու ևս փայլում էին ոսկու նման։ Բայց ամենից աւելի հետաքրքրական էր նրանց համար մակոյկի Գալուստը, որը, իւրաքանչիւր ամիսը մի անգամ կենսական ամենաանհրաժեշտ պիտոյքներն էր մատակարարում, նամակներ և զանազան տեսակ նորութիւններ բերում մայր ցամաքից։

Մի դիշեր յանկարծ սարսափելի, ահեղ որոտումներ տեղի ունեցան, այն աստիճան զօրեղ, որ նրանցից իւրաքանչիւրը հրաժարվեց պարտադիր հերթակալութիւնից, այլ որոշեցին միասին պահպանել Փարօսը։ Նրանք երկուսով բարձրացան աշտարակի վրա և իրար պինդ ղրկած՝ նստեցին վանդակապատ մօտ։

Երկինքը հէնց շարունակ կիսվում էր հրային չարագուշակ ժապաւէններով, կայծակի շանթերը, ամպերի սասանական գորգոռը, միախառնվելով ալիքների կատաղի մռնչոցների հետ, սարսափահար էին անում նոյնիսկ համանման տեսարաններին սովոր պահապաններին։

Մէկ էլ հեռու հորիզոնի վրա փայլակը յանկարծ փայլեց և այդ վայրկենական լոյսի շնորհիւ անսպասելի կերպով աչքի ընկաւ մի փոքրիկ առագաստանաւ. Փարօսից մօտաւորապէս քսան սաժէն հեռաւորութեան վրա ջարդ ու փշուր եղած տախտակներով, կտորկտոր առագաստներով, որոնք—քնաթաթախ խելագարի մազերի նման—խիստ քամուց խառնուփնթորված լինելով՝ մի խառնշփոթ և ահռելի պատկեր էին ներկայացնում։

Լսվեցին սիրտ կտրատող յուսահատական ձայներ, սուր ճչոցներ, որոնք սակայն խլացան ալիքների աղմկայոյզ, կատաղի մռնչիւններից։

Առագաստանաւը օրհասական խիստ հարուած էր ստացել ժանծաղուտի վրա...

Մօտ տասը սաժէն հեռաւորութեան վրա խեղդվում, զոհվում էին մարդիկ, իզուր տեղը կռուելով սոսկալի, վիշապանման ալիքների դէմ։ Գուցէ և դրանցից մի քանիսը նոյն իսկ կարողացել էին բռնել ջարդ ու փշուր եղած նաւակի տախտակներից և դեռ յուսալով ծրդում էին դէպի Փարօսի խարուսիկ լոյսը...

Երկու պահապանները իրար երես նայեցին՝ յուզված լինելով մինչև հոգու խորքը։

—Լոյսը այս կողմը դարձրու, Պետրոս, ես դնում եմ օգնութեան հասնելու, բացականչեց յանկարծ Արմանը։

—Ո՛չ, դու մնա՛... Ե՛ս կրգնամ, պատասխանեց Պետրոսը։

Բայց Բոլգարացի հայը դդուշութեամբ մի կողմ հրեց նրան։

—Դու չ՚պէտք է քո անձը զոհես... Քեզ են նայում քո պառաւ մայրն ու մանկահասակ քոյրը. իսկ ես ոչ ոք չունեմ, ոչ ոքի չեմ կերակրելու։

Այդ իսկապէս ճշմարիտ էր. Պետրոսը ոչինչ չասեց և քնքշաբար գրկեց ընկերին։

—Դու միայն լա՛ւ լուսաւորիր, բացականչեց նա վերջին անգամ և սանդուղքներից սկսեց ցած իջնել։

—Թող Աստուած պահի քեզ, ասաց Պետրոսը դողդոջուն ձայնով։

Եւ ուժգին տրոփող սրտով նա կանգնեց աշտարակի վանդակապատի մօտ, լապտերի ամբողջ լոյսը դարձնելով դէպի այդ ողբալի տեսարանը։

Նա տեսաւ, թէ ինչպէս իր ընկերը արձակեց փոքրիկ մակոյկի թոկերը և մի ակրնթարթում նեռվելով նրա մէջ—ընկաւ ալիքների գիրկը։ Մակոյկը մերթ բարձրանում էր հսկայական ալիքների գագաթը, մերթ կայծակի արագութեամբ անյայտանում, ջրասոյզ էր լինում, որ և իւրաքանչիւր անգամ սարսափելի յուսահատական ձայներ էր խլում խեղճ Պետրոսի կրծքից, որի ձեռքերը հաղիւ հաղ կարողանում էին պահել լապտերը։

Եւ Արմանը զարմանալի ոյժ և ճարպիկութիւն գործ դնելով՝ կռւում էր անընդհատ։ Սակայն միւս կողմից՝ յարձակվող յանկարծահաս հսկայական ալիքները միանգամից ներս էին քաշում նրան։ Բայց Արմանը շուտով կրկին երևաց, այս անգամ արդէն առանց նաւակի —մէնակ, ջրի սևագոյն մակերևոյթի վրա, յետոյ դարձեալ աներևոյթացաւ ալեկոծ զանգուածի մէջ և նեռվեց ուղիղ Փարոսի ստորոտը՝ ձեռքում բռնած ունենալով մի ինչ որ ծանր, տարօրինակ, անձև մի առարկայ։

Պետրոսը վայրկենապէս նեռվեց ցած և սկսեց օգնել՝ բարձրացնելու բռնաւոր ընկերին։

Արմանի բեռը—մի կին էր։

Երկու ընկերներն անմիջապէս տարան նրան իրանց սենեակը, պառկեցրին մահճակալի վրա, գլուխը ցած դրեցին, որպէս զի ականջների և բերանի մէջ լցված ջուրը դուրս թափ-

վի։ Կարճ միջոցից յետոյ, նա մի թոյլ հառաջ արձակեց և ամբողջ մարմնով սկսեց դողալ։

—Նա մրսում է, ասաց Պետրոսը։

—Այո՛, հարկաւոր է նրա զգեստները հանել, այլապէս նա կրսառէի, պատասխանեց Արմանը։

Եւ առանց տատանվելու, միմիայն դրժբաղդին ազատելու դիտաւորութեամբ, նրանք անմիջապէս հանեցին նրա բոլոր թաց զգեստները և պառկեցրին վերմակի վրա, վառարանի մօտ։

Սակայն այդ բոպէին յանկարծ երկուսին էս մի զարմանալի զգացմունք տիրեց, երկուսն էս զգացին իրանց ներքին աշխարհում առաջին անգամ մուտք գործած յեղափոխութեան ալեկոծումները... Լո՜ւռ, բոլորովին իրար մոռացած, նրանք սառածի նման կանգնած էին, առանց հեռացնելու հայեացքները երիտասարդ կնոջ գեղեցկաձև մարմնի վրայից։ Նրա գեղեցկութիւնը, մանաւանդ վառարանի ազօտ կախարդական լոյսից, նրանց կատարեալ խելացնոր էր դարձնում, մոռցնում նրանց առողջ դատողութիւնը և առաջ էր բերում անմիտ, անասնական զգացումներ, վայրենի հակումներ...

Նրանց հայեացքները անսպասելի կերպով իրար հանդիպեցան, սակայն նրանց մէջ այլ

էս չ'կար առաջուայ ընկերական ա՛յն բուռն սիրոյ արտայայտութիւնը։ Ընդհակառակը՝ նրանց մէջ այժմ պարզապէս նկատելի էր անվստահութիւն դէպի իւրաքանչիւրը, նոյն իսկ խորին արհամարհանք, ատելութիւն։

Արմանը շտապով վերցրեց իր վերմակը և ծածկեց կնոջ մերկութիւնը։

Այդ բոպէին երիտասարդ կինը բաց արեց աչքերը և երկիւղով նայեց իր շուրջը, արտասանելով մի քանի անկապ խօսքեր։

—Հանդստացէ՛ք, ասաց Պետրոսը ռուսերէն լեզուով, դուք փրկւած էք...

Խեղճ կինը ամօթից աւելի պինդ փաթաթվեց վերմակի մէջ և հազիւ լսելի ձայնով արտասանեց ռումիներէն.

—Ես ոչինչ չեմ հասկանում։

Արմանը չափազանց ուրախացաւ, որովհետև ապրելով Ռումինիայում մի քանի տարի, նա սովորել էր նրանց դաւարաբարբառը։ Կնոջ ասածը հասկանալով, նա ժունկ չդրեց նրա առջև և մի առանձին մխիթարիչ ձայնով հանդստացնում էր դժբաղդ կնոջը, որը դառնապէս, կսկրծալից արտասուքով ողբում էր իր ծնողների անդարձ կորուստը, որոնք նոյնպէս խեղդվեցին նաւի խորտակման միջոցին։

Պետրոսը ո՛չ մի բառ չ'հասկանալով, չա-

բամտուլթեամբ լսում էր այդ երկուսի զգացված խօսակցութիւնը։

Ցանկարծ նրա բռունցքները սեղմվեցին և նա արիւնացնելու չափ կծեց իր շրթունքները։ Անծանօթուհու հայեացքը դարձաւ դէպի Արմանը և նրա քնքոյշ դէմքի վրա փայլեց թոյլ, հաղիւ նկատելի գոհունակութեան ժպիտ։

Այս դէպքից յետոյ, Պետրոսն ու Արմանը իրար հանդիպելուց խոյս էին տալիս։ Երբեմն միայն խօսում էին, այն էլ պաշտօնական կարճ ֆրազներով։ Սակայն երբ դրիմցին իր պաշտօնումն էր լինում, Արմանը երկար զրուցատրութիւններ էր անում երիտասարդ ռումինուհու հետ։ Դա մի ռումինացի գիւղական չահիլ աղջիկ էր, գեղեցիկ դէմքով, առողջ կազմուածքով, վառվռուն, արտայայտիչ աչքերով և զգայուն ու կրակոտ շրթունքներով։

Նա պատմեց, թէ ինչպէս պատրաստվելիս է եղել ծնողների հետ ճանապարհորդութիւն կատարելու դէպի Քէրչ՝ իր կորած եղբօրը որոնելու համար և այնուհետև վերադառնալու Վառնա քաղաքը, և թէ ինչպէս այդ սոսկալի խորտակումը հիմնաւորապէս ոչնչացրեց իր ծրագիրները։

Այժմ ի՞նչ պէտք է անէր նա։ Արմանը ժպտաց. նա միանգամայն մոռացաւ իր հարստացուին, որ ամբողջ երեք տարի սպասում էր նրան, մոռացաւ իր տուած երդումները, տասնեակ անգամ կրկնած խոստումները և բացականչեց.—մենք կրպակվենք... Դուք կը լինէք իմ կինը...

Երիտասարդ կինը մի քաղցր հայեացք ղրեց Արմանի վրա. նրա սիրտը ուժգնապէս բաբախում էր, նա յուզմունքից ամբողջ մարմնով դողում էր։ Պարզ էր, որ նա հաւանել էր արդէն Բոլգարացի հային։ Նրա վրա ադդել էին Արմանի գեղեցիկ, սև աչքերը, դէմքի ուղիղ գծագրութիւնը, գեղեցիկ զանգուր մազերը... Եւ առանց մի բոպէ լուրջ դատելու, ենթարկվելով միայն իր սրտի բոպէական թելադրութեանը, նա իր գլուխը խոնարհեցրեց նրա ուսի վրա, և նրանց երկուսի դողդոջուն շրթունքները հալվեցին, դրոշմելով երկար, հընչիւն կրքոտ համբոյրներ։

Մի անգամ երեկոյեան, երբ հերթակալը կրկին Պետրոսն էր, նա չը կարողացաւ երկար մնալ աշտարակի վրա—վատ զգաց իրան, արիւնը խփեց նրա գլխին, քներակները սաստիկ դարկվում էին, տեսողութիւնը մռայլվում։ Նրա սիրտը բաբախում էր մի ինչ որ

նախազգացումից. Նա շտապով իջաւ ցած և անսպասելի կերպով մտաւ սենեակ...

Արմանն ու երիտասարդ ռումինուհին, առանց մի փոքր նախազգուշութիւն ձեռք առնելու, նստած էին երկար թախտի վրա և փոխադարձ ջերմ համբոյրներ էին շնորհում իրար...

Պետրոսը անակնկալ կերպով ներկայ լինելով այս տեսարանին, կատաղելապէս խելագարվեց: Զրտալով ոչ մի հաշիւ իր գործողութիւններին, նա յափշտակեց պատից կախված սուրը և յարձակվեց Արմանի վրա: Վերջինս արեան մէջ շաղախված՝ ընկաւ դետին:

Ոճրագործը սարսափահար եղած՝ նայեց իր գոհի վրա, յետոյ դժբաղդ աղջկայ վրա, որը երկիւղից կուչ էր եկել սենեակի մի անկիւնում և մի տեսակ վայրենի հեծկլտոցներ էր արձակում:

Նա վայրկենապէս դղջալով իր արածի վրա, խելագարի նման սկսեց իր մազերը փետել: Սառը քրտինքը ծածկեց նրա ճակատը, գլուխն ևս պտոյտ էր գալիս: Նա մի երկու քայլ արաւ դէպի դժբաղդ, գլուխը կորցրած աղջիկը, բայց սայթաքելով արեան լճակում՝ ընկաւ իր ընկերոջ դիակի վրա: Այն ժամանակ նա ծունկ չոքեց և շնչասպառ եղած՝ սկսեց

«Հայր մերը» մրմնջալ, որի վերջին խօսքերը ասելիս՝ խրեց իր կուրծքը նոյն չարաբաստիկ դաշոյնը...

Կէսօր էր: Ալեկոծութիւնը ամբողջ երեք չորս օր շարունակվում էր անընդհատ: Փարոսը չէր լուսաւորվում և այդտեղից անցնող նաւերը հէնց Փարոսի մերձակայքումն էին խորասոյզ լինում:

Եւ երբ ժամանեց նաւը, բերելով իր հետ հարսներից ու ծնողներից նամակներ՝ նաւաստիները դեռ ևս հեռուից նկատեցին, թէ ինչպէս ագռաւների ահագին երամներ էին սաւառնում Փարոսի շուրջը: Իսկ նրա աշտարակի վրա երևում էր մի տարօրինակ էակ, որը դէպի երկինք բարձրացրած ձեռքերով, անկարգ, գդգված մազերով, արձակում էր վայրենի, ոչ մարդկային մի ձվոց:

Հին-Ղրիմ:

[illegible]

ՆՈՅՆ ՀԵՂԻՆԱԿԻ

(տպագրած)

1. Մելքոն ադալին սթՕռիան (ղրիմի բարբառով) . . . . . 15 կոպ.
2. Մի լար. բօմանս . . . . . 60 »
3. Մելքոն ադալին վերջաբանութիւնը (ղրիմի բարբառով) . . 20 »

ՏՊԱԳՐՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ ՊԱՏՐԱՍՏ ԵՆ

4. Պա՛սմութիններ խրբմցիներուն կեանքէն (ղրիմի բարբառով)։
5. Խէչօյի ընդդիմախօսութիւնը։

ԳԻՆՆ Է 5 ԿՈՊ.

Գրքերի պահեստը գտնվում է՝ г. Старый Крымъ (Таврич. губ.) А. М. Туманьянцъ. Վաճառվում են նաև Թիֆլիզում—Գուտաեներբերգ և Կենտրոնական գրավաճառանոցներում։

ՀՀ Ազգային գրադարան
NL0365827

56. 409